Հավելված
Հաշվեքննիչ պալատի
2020թ. դեկտեմբերի 25-ի թիվ 231-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՑ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածական մաս 3
2. Ամփոփագիր 5
3. Տվյալներ հաշվեքննվող օբյեկտի ֆինանսական հաշվեքննության վերաբերյալ 8
4. Անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումներ 10
5. Խեղաթյուրումների վերաբերյալ գրառումներ 12
6. Հաշվեքննությամբ արձանագրված այլ փաստեր 14
7. Եզրակացություն 15
8. Առաջարկությունների ամփոփագիր 17

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի օգոստոսի 7-ի թիվ 147-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ ՏԿԵՆ 2020 թ.) Ջրային կոմիտե:
Հաշվեքննության առարկան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտեի 2020 թվականի պետական բյուջեի վեց ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննության չափանիշները	ՀՀ կառավարության 26.12.2019թ. «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N1919-Ն որոշում, ՀՀ կառավարության 28.02.2019թ. «ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային կոմիտեի «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գործութենությունը դադարեցնելու և ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 28-ի N 531-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N170-Ն որոշում, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտեի և ջրօգտագործող ընկերությունների հետ կնքված՝ «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով նախատեսված սուբսիդիայի տրամադրման» թիվ 1-ից մինչև 84-ը պայմանագրերը: ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 18.02.2020թ. «Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին 2020թ. Ֆինանսական աջակցության տրամադրման չափաքանակները՝ ըստ առանձին ջրօգտագործողների ընկերությունների հաստատելու մասին» N206-Ա հրաման: ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության Ջրային կոմիտեի և «Ջրառ»

	ՓԲԸ միջև կնքված 21.02.2019 թ. թիվ 1-Ս պայմանագիրը:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2020թ. հունվարի 1-ից մինչև 2020թ. հունիսի 30-ը ներառյալ:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2020թ. օգոստոսի 17-ից մինչև 2020 թվականի հոկտեմբերի 31-ը ներառյալ: ՀՀ հաշվեքննիչ պալատի 30.09.2020թ. թիվ 168-Ա որոշմամբ հաշվեքննությունը կասեցվել է, իսկ 20.11.2020թ. թիվ 171-Ա որոշմամբ՝ վերսկսվել:
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանությունների, ՀՀ պետական բյուջեի 3,6,9 ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության մեթոդաբանությունների համաձայն: Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են զննում, դիտարկում, հարցում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ ընթացակարգերը:
Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում	Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի վեցերորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի նախագահ Լևոն Յոլյանը:

2. ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեի 2020 թվականի պետական բյուջեի տարեկան հաշվետվության համաձայն՝ տարեկան ճշտված պլանը կազմել է 47,822,929.9 հազ. դրամ: Հաշվետու ժամանակահատվածի (2020 թ. 1-ին կիսամյակ) ճշտված պլանը կազմել է 23,208,193.4 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 9,422,004,83 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 5,830,027.53 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախս)՝ 5,164,736.71 հազ. դրամ: Հաշվետու ժամանակաշրջանում՝ ճշտված պլանի նկատմամբ, բյուջեն կատարվել է 22.25%-ով:

ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեում 2020 թվականի 1-ին կիսամյակում նախատեսվել է թվով 7 ծրագրի շրջանակում իրականացնել 44 միջոցառում, որից չի իրականացվել 23 միջոցառում, այդ թվում՝ 6-ի մասով կատարվել է ֆինանսավորում:

ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեում 2020 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման նկատմամբ հաշվեքննությամբ ընդգրկվել է ստորև ներկայացված աղյուսակում թվով 4 միջոցառում՝ 4,503,817.78 հազ.դրամ ընդհանուր գումարով:

հազ. դրամ

N	Ծրագիրը, միջոցառումը		Հոդվածը		Փաստը
1	1004-11001	Ոռոգում-ջրառ իրականացնող կազմակերպություններին ֆինանսական աջակցության տրամադրում	451100	Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություն ներին	748,000.0
2	1004-11002	Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում	452100	Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություն ներին	1,838,412.4
3	1004-31001	Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Վեդու ջրամբարի կառուցում	511200	Շենքերի և շինությունների շինարարություն	1,002,581.1

4	1004-31005	Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի շրջանակներում ջրային տնտեսության ենթակառուցվածքների հիմնանորոգում	511200	Շենքերի և շինությունների շինարարություն	914,824.1
ԸՆԴԱՄԵՆԸ					**4,503,817.8**

Ըստ առանձին միջոցառումների հաշվեքննությամբ ընդգրկվել են հետևյալ էական փաստերը՝

1. ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի կողմից չի ապահովվել «Ոռոգում-ջրառ իրականացնող կազմակերպություններին ֆինանսական աջակցության տրամադրում» 04.02.04.03 ծրագրով բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին» 451100 հոդվածով «Ջրառ» ՓԲԸ-ի հետ 22.01.2020թ. կնքված՝ «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով նախատեսված սուբսիդիայի տրամադրման» N 1-Ա պայմանագրի 5-րդ կետի մի շարք պահանջների կատարումը՝ կապված կատարված աշխատանքների հանձնման-ընդունման ակտերում ժամկետների ճշգրիտ ներկայացման, թերություններով կազմված հայտ գրությունների ընդունման և դրանց հիման վրա գումարների փոխանցման հետ:

2. ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի կողմից չեն պահպանվել նաև վերոնշյալ պայմանագրի 3.2 և 3.3 կետերի պահանջները, որոնք վերաբերում են «Ջրառ» ՓԲԸ-ի սուբսիդիայի գումարները ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում օգտագործված գումարների ուղղությունների վերաբերյալ համապատասխան հաշվետվությունների ներկայացմանը: Իրականում, հաշվետվությունների փոխարեն ընդունվել են «Ջրառ» ՓԲԸ-ի կողմից ուղարկվող հայտ գրությունները:

3. ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեն դեռևս չի ապահովել ջրօգտագործող ընկերությունների արդյունվետ կառավարումը և պետական բյուջեից նրանց հատկացվող սուբսիդիայի գումարների նպատակային օգտագործումը: Այսպես, 08.04.2020 թվականին «Սյունիք» ՋՕԸ-ին հետ կնքված պայմանագրով հատկացվել է 14,206.6 հազ. դրամ նախորդ տարիների հարկային պարտավորությունների մասով պարտքի մարման նպատակով:

4. ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի կողմից 2020թ. գարնան նախապատրաստական աշխատանքների իրականացման նպատակով «Կոտայք» ՋՕԸ-ի հետ կնքված պայմանագրով 1-ին կիսամյակում նախատեսված հասանելիք 55,328.9 հազ. դրամի փոխարեն կատարված աշխատանքների համար վճարվել է 62,914,8 հազ. դրամ:

5. Հաշվեքննությամբ արձանագրվել են նաև միջոցառումների շրջանակում նախատեսված ծախսային հոդվածներով պլանային ցուցանիշների էական թերակատարման փաստեր: Օրինակ՝ «31005 Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի շրջանակներում Ջրային տնտեսության ենթակառուցվածքների հիմնանորոգում» միջոցառման «511200 Շենքեր և շինությունների շինարարություն» հոդվածով հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանը կազմել է 4,181,484.5 հազ. դրամ, փաստացի ծախսը 1,214,487.96 հազ. դրամ, կամ փաստացի ծախսը՝ ճշտված պլանի նկատմամբ, կազմել է 29.0%: Նույն կերպ՝ «31001 «Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Վեդու ջրամբարի կառուցում» միջոցառման «511200 Շենքեր և շինությունների շինարարություն» հոդվածով հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանը կազմել է 2,983,788.7 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 1,324,707.42 հազ. դրամ, կամ փաստացի ծախսը՝ ճշտված պլանի նկատմամբ, կազմել է 44.4%: «Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին» 452100 հոդվածով 2020թ. 1-ին կիսամյակի ճշտված պլանը կազմել է 2,856,008.0 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 1,838,412.49 հազ. դրամ, կամ փաստացի ծախսը՝ ճշտված պլանի նկատմամբ, կազմել է 64.37%:

3. ՏՎՅԱԼՆԵՐ ՀԱՇՎԵՔՆՆՎՈՂ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեի 2020 թվականի պետական բյուջեի տարեկան հաշվետվության համաձայն՝ տարեկան ճշտված պլանը հաստատվել է 47,822,929.9 հազ. դրամ: Հաշվետու ժամանակահատվածի (2020 թ. 1-ին կիսամյակ) ճշտված պլանը կազմել է 23,208,193.4 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 9,422,004.83 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 5,830,027.53 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախս)՝ 5,164,736.71 հազ. դրամ: Հաշվետու ժամանակաշրջանում՝ ճշտված պլանի նկատմամբ, բյուջեն կատարվել է 22.25 %-ով:

ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեում 2020 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման նկատմամբ հաշվեքննությամբ (ելնելով նվազագույն ծածկույթի շեմի ցուցանիշից) ընդգրկվել է թվով 4 միջոցառում՝ 4,503,817.78 հազ.դրամ ընդհանուր գումարով

ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեում 2020 թվականի 1-ին կիսամյակում նախատեսվել է թվով 7 ծրագրի շրջանակում իրականացնել 44 միջոցառում, որից չի իրականացվել 23 միջոցառում, որից 6-ի մասով կատարվել է ֆինանսավորում:

4. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

1. Առկա են անհամապատասխանություններ ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի և «Ջրառ» ՓԲԸ-ի միջև 22.01.2020թ. կնքված՝ «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով նախատեսված սուբսիդիայի տրամադրման» N 1-Ա պայմանագրի 5-րդ կետի պահանջների հետ: ՀՀ կառավարության 26.12.2019թ. «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N1919-Ն որոշմամբ 2020թ. պետական բյուջեի շրջանակներում Ջրային կոմիտեին «Ոռոգում-ջրառ իրականացնող կազմակերպություններին ֆինանսական աջակցության տրամադրում» 04.02.04.03 ծրագրով բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին» 451100 հոդվածով նախատեսված 1,089,329. 5 հազ. դրամ գումարը ստանում է ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեն և տարվա ընթացքում տրամադրում է «Ջրառ» ՓԲԸ-ին ըստ հաստատված եռամսյակային համամասնության՝ 2020թ. գործունեության ֆինանսական ճեղքվածքի մարման նպատակով: 2020 թվականի 1-ին կիսամյակի ճշտված պլանով ֆինանսական աջակցության գումարը հաստատվել է 800,000.0 հազ. դրամի չափով, ֆինասավորումը, փաստացի ծախսը և փաստը (դրամարկղային ծախս) կազմել են 748,000.0 հազարական դրամ, կամ 2020 թ. 1-ին կիսամյակի փաստացի ծախսը՝ ճշտված պլանի նկատմամբ, կազմել է 93.5%:

Վերոնշյալ պայմանագրի 5-րդ կետով սահմանվել է, որ «Ջրառ» ՓԲԸ-ն գումար ստանալու նպատակով ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտե ներկայացնում է հայտ գրություն (կետ 5.1), իսկ գումարը ստանալուց հետո մինչև հաջորդ ամսվա 10-ը՝ աշխատանքների հանձնման-ընդունման ակտ (կետ 5.2): Իրականում, «Ջրառ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված՝ 03.02.2020թ. N 01, 01.04.2020թ. N 02, 13.05.2020թ. N 03 և 11.06.2020թ. N 04 ակտերում աշխատանքների կատարման ժամանակահատվածը նշվել է ոչ թե նախորդ, այլ ընթացիկ ամիսը, իսկ ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեն՝ չպահպանելով պայմանագրի 5.3 կետի պահանջը, դրանք ընդունել և պայմանգրի 3.1 կետով սահմանված կարգով սուբսիդիայի գումարներն ամբողջությամբ փոխանցել է «Ջրառ» ՓԲԸ-ի հաշվարկային հաշվին (31.01.2020թ. թիվ 68 հայտ գրության հիման վրա փոխանցվել է 200.000.0 հազ. դրամ, 25.03.2020թ. թիվ 290 հայտ գրության հիման վրա՝ 148.000.0 հազ. դրամ, 07.05.2020թ. թիվ 387 հայտ գրության հիման վրա՝ 150.000.0 հազ. դրամ և 10.06.2020թ. հայտ գրության հիման վրա՝ 250.000.0 հազ. դրամ, կամ 1-ին կիսամյակում ընդամենը 748.000.0 հազ. դրամ):

2. Առկա են անհամապատասխանություններ ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի և «Ջրառ» ՓԲԸ-ի միջև 22.01.2020թ. կնքված՝ «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով նախատեսված սուբսիդիայի տրամադրման» N 1-Ա պայմանագրի 3.2 կետի պահանջների կատարման մասով՝ կապված սուբսիդիայի գումարների ծախսման ուղղությունների ներկայացման հետ: «Ջրառ» ՓԲԸ-ն պարտավոր էր սուբսիդիայի գումարները ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտե ներկայացնել համապատասխան հաշվետվություններ օգտագործված գումարների ուղղությունների վերաբերյալ, որը չի կատարել, իսկ այդ կապակցությամբ ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի պարզաբանմանմամբ նրանց կողմից որպես հաշվետվություն ընդունվել են «Ջրառ» ՓԲԸ-ի կողմից ուղարկվող հայտ գրությունները: Արդյունքում, ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեն չի օգտագործել նաև պայմանագրի 3.3 կետով իրեն վերապահված՝ տրված գումարների ծախսման ուղղությամբ հաշվետվություններ կամ ծախսերը հիմնավորող այլ փաստաթղթեր պահանջելու իրավասությունը:

3. Առկա է անհամապատասխանություն ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի և «Սյունիք» ՋՕԸ-ի միջև պետական բյուջեից սուբսիդիայի տրամադրման 08.04.2020 թվականին կնքված պայմանագրի 1.1 կետի պահանջի կատարման հետ: ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1919-Ն որոշման համաձայն՝ 2020 թվականի ՀՀ պետական բյուջեի շրջանակներում «Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում» 04.02.04.01 ծրագրով բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին» 452100 հոդվածով գումարը ստանում և 2020 թվականի ընթացքում տրամադրում է Ընկերության 2020թ. փետրվար ամսին առաջացած 6,492.8 հազ դրամ աշխատավարձի պարտքի և 14,206.6 հազ. դրամ հարկային պարտավորությունների մասով պարտքի մարմանը: Իրականում, ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի կողմից «Սյունիք» ՋՕԸ-ին 14,206.6 հազ. դրամը փոխանցվել է նախկին տարիների հարկային պարտավորությունների պարտքի մարման դիմաց:

4. Առկա է անհամապատասխանություն ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի և «Կոտայք» ՋՕԸ-ի միջև գարնան նախապատրաստական աշխատանքերի իրականացման նպատակով կնքված պայմանագրի 1.1.1 կետի հետ: 2020թ. 1-ին կիսամյակում վերջինիս համար նախատեսված 55,328.9 հազ. դրամի փոխարեն կատարված աշխատանքների դիմաց վճարվել է 62,914.8 հազ. դրամ:

5. Առկա են անհամապատասխանություններ ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեի կողմից «Գեղարքունիք» ՋՕԸ-ի հետ 28.04.2020թ. կնքված թիվ 37 և 18.05.2020թ. կնքված թիվ 57 պայմանագրերով նախատեսված՝ աշխատավարձի մասով առաջացած պարտքերի մարման ենթակա գումարի չափի հետ: Վերոնշյալ երկու պայմանագրերը կնքվել են «Գեղարքունիք» ՋՕԸ-ի մարտ ամսվա աշխատավարձի մասով առաջացած պարտքի գումարի մարման նպատակով, որը սակայն, չի համապատասխանում դրա իրական ցուցանիշին:

ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

1. ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի կողմից 1004 ծրագրի «31005 Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի շրջանակներում ջրային տնտեսության ենթակառուցվածքների հիմնանորոգում» և «31001 Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Վեդու ջրամբարի կառուցում» միջոցառումների մասով ֆինանսավորման գումարները էապես գերազանցել են փաստը (դրամարկղային ծախսը): Այսպես՝

- «1004 Ոռոգման համակարգի առողջացում» ծրագրի «31005 Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի շրջանակում ջրային տնտեսության ենթակառուցվածքների հիմնանորոգում» միջոցառման «511200 Շենքեր և շինությունների շինարարություն» հոդվածով հաշվետու ժամանակահատվածում փաստը (դրամարկղային ծախս) կազմել է 914,824.17 հազ. դրամ (194,429.4 հազ. դրամի չափով փաստի (դրամարկղային ծախս) վճարումը կատարվել է ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ, իսկ 720,394.8 հազ. դրամը՝ Հիմնադրամի հաշվին առկա վարկային միջոցների մնացորդ գումարներից), այն դեպքում, երբ ըստ հայտի ֆինանսավորվել է 516,183,1 հազ. դրամ: Այլ կերպ, ֆինանսավորման ենթակա գումարը գերազանցվել է 398,641.07 հազ. դրամով:
- «1004 ծրագրի «31001 «Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Վեդու ջրամբարի կառուցում» միջոցառման «511200 Շենքեր և շինություններ» հոդվածով հաշվետու ժամանակահատվածի փաստը (դրամարկղային ծախս) կազմել է 1,002,581.12 հազ. դրամ, իսկ ըստ հայտի ֆինանսավորումը՝ 688,566.6 հազ. դրամ (որից 198,816,2 հազ. դրամի չափով փաստը (դրամարկղային ծախս) վճարվել է ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ, իսկ 803,764.9 հազ. դրամը՝ Հիմնադրամի հաշվին առկա վարկային միջոցների մնացորդ գումարներից): Այլ կերպ, ֆինանսավորման ենթակա գումարը գերազանցվել է 314,014.52 հազ. դրամով:

2. Ֆինանսավորման ենթակա գումարների գերազանցմամբ վճարումների կատարման փաստեր արձանագրվել են նաև ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի 2020թ. երեք ամիսների գործունեության հաշվեքննության արդյունքներով: Այդ կապակցությամբ երևույթի պատճառների ուսումնասիրությամբ կատարվել է եզրակացություն այն մասին, որ դրանք հետևանք են ֆինանսավորման հիմքում ընկած մասհանման հայտերի ձևավորման և շրջանառության ընթացակարգերում ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի վերահսկողական գործառույթների սահմանափակվածության և վճարումների իրականացման ընթացքում նրա՝ որպես զուտ գումար հատկացնողի: Միաժամանակ, առաջարկվել էր ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը վերանայել վարկային ծրագրերի կատարման ընթացքում ֆինանսավորման հետ կապված ընթացակարգերը՝ մասհանման հայտերի

ձևավորման, դրանց ներկայացման և ընդունման, վճարման ենթակա գումարների ճշտության ապահովման գործում ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեին վերահսկողական գործառույթներ ամրագրելու տեսանկյունից՝ բացառելով մասհանման հայտերով իրական ծավալից ավելի ֆինանսական միջոցների հատկացման փաստերը: Այդուհանդերձ, առաջին եռամսյակում հաշվեքննությամբ ներկայացվածի խնդրի վերաբերյալ փոփոխություններ չեն արձանագրվել:

5. ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

1. «31005 Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի շրջանակներում Ջրային տնտեսության ենթակառուցվածքների հիմնանորոգում» միջոցառման «511200 Շենքեր և շինությունների շինարարություն» հոդվածով հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանը կազմել է 4,181,484.5 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 516,183.1 հազ. դրամ, փաստացի ծախսը 1,214,487.96 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախս)՝ 914,824.17 հազ. դրամ: Այսպիսով՝ փաստացի ծախսը՝ ճշտված պլանի նկատմամբ, կազմել է 29.0%, ինչը պայմանավորված է ծախսերի պլանավորման ցածր մակարդակով:
2. «31001 «Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Վեդու ջրամբարի կառուցում» միջոցառման «511200 Շենքեր և շինությունների շինարարություն» հոդվածով հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանը կազմել է 2,983,788.7 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 688,566.6 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 1,324,707.42 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախս)՝ 1,002,581.12 հազ. դրամ: Փաստացի ծախսը՝ ճշտված պլանի նկատմամբ, կազմել է 44.4%: ՀՏՋՀ-ի «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման մասնաճյուղ»-ի կողմից ՀՀ Ջրային կոմիտեին ներկայացվել է հավելված 1-ում նշված միջոցառումների վերաբերյալ Հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին 01.01.2020-30.06.2020թթ. ժամանակահատվածի վարկային միջոցների և ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվետվությունները: Ներկայացված հաշվետվությունների (համաֆինանսավորման և վարկային) ցուցանիշների հանրագումարները համապատասխանում են ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված հաշվետվության տվյալներին:
3. «11002 Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում» միջոցառման շրջանակում ՀՀ կառավարության 26.12.2019թ. «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1919-Ն որոշմամբ ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեին պետական բյուջեից նախատեսվել է հատկացնել 2,856,008. 0 հազ. դրամ գումարով սուբսիդիա: Ըստ 15 ջրօգտագործողների ընկերությունների կողմից 2020 թվականի համար ներկայացված՝ ֆինանսական հոսքերի հիման վրա ֆինանսական ճեղքվածքի մարման համար ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի կողմից

ընդունվել է 2020 թվականի ֆինանսական աջակցության տրամադրման չափաքանակների հատկացման նախագիծ, որի հիման վրա ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 18.02.2020թ. N 206-Ա հրամանով հաստատվել են 2020 թվականի ֆինանսական աջակցության տրամադրման չափաքանակներն՝ ըստ առանձին ջրօգտագործող ընկերությունների: «Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին» 452100 հոդվածով 2020թ. 1-ին կիսամյակի ճշտված պլանը կազմել է 2,856,008.0 հազ. դրամ, ֆինանսավորումը, փաստացի ծախսը, փաստը (դրամարկղային ծախս)՝ 1,838,412.49 հազարական դրամ, կամ փաստացի ծախսը՝ ճշտված պլանի նկատմամբ, կազմել է 64.37%, որը ցածր ցուցանիշ է, եթե հաշվի առնել հատկացվող սուբսիդիայի գումարների ձևավորման հստակ մեխանիզմների առկայությունը: Հետևաբար՝ արձանագրված ցածր կատարողականը բացատրվում է ծախսերի թերի պլանավորմամբ:

4. 2020 թվականի 1-ին կիսամյակում ջրօգտագործողների 15 ընկերությունների հետ կնքվել են պետական բյուջեով նախատեսված թվով 84 սուբսիդիայի տրամադրման պայմանագրեր ընդամենը 1,838,412.5 հազ. դրամ գումարով, այդ թվում 1-ին եռամսյակում 17 պայմանագրեր 462,680.9 հազ. դրամ, 2-րդ եռամսյակում՝ 67 պայմանագրեր 1,375,731. 6 հազ. դրամ գումարով: 2020թ. 1-ին կիսամյակի ավարտից հետո պետական բյուջեից սուբսիդիայի տրամադրման պայմանագրերի կատարման կապակցությամբ 15 ջրօգտագործողների ընկերությունների կողմից ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտե է ներկայացվել հաշվետվություն 1-ին կիսամյակի ընթացքում հատկացված սուբսիդիայի գումարների օգտագործման վերաբերյալ՝ ըստ ծախսային ուղղությունների: Համաձայն ստացված սուբսիդիայի գումարների և ըստ ուղղությունների դրանց ծախսման վերաբերյալ տեղեկանքների՝ փաստացի ծախսված գումարները կազմել են 1,723,117.2 հազ. դրամ: Արդյունքում, անհրաժեշտ ծախսերի թերի պլանավորման հետևանքով 1-ին կիսամյակի ընթացքում ջրօգտագործողների 15 ընկերությունների մոտ առաջացել է 115,295.3 հազ. դրամի չափով չծախսված գումարի մնացորդ:

6. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեի 2020 թվականի պետական բյուջեի տարեկան հաշվետվության համաձայն՝ տարեկան ճշտված պլանը կազմել է 47,822,929.9 հազ. դրամ: Հաշվետու ժամանակաշրջանում (2020 թ. 1-ին կիսամսյակ) ճշտված պլանի նկատմամբ բյուջեն կատարվել է 22.25%-ով: Ցածր կատարողականներ են արձանագրվել նաև «31005 Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի շրջանակներում Ջրային տնտեսության ենթակառուցվածքների հիմնանորոգում» միջոցառման «511200 Շենքեր և շինությունների շինարարություն», «31001 «Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Վեդու ջրամբարի կառուցում» միջոցառման «511200 Շենքեր և շինությունների շինարարություն» և «Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին» 452100 հոդվածներով, որոնք կազմել են համապատասխանաբար՝ 29.0%, 44.4% և 64.37%: Նման ցուցանիշները վկայում են, որ ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեն դեռևս բավարար ուշադրություն չի հատկացնում ծախսերի իրատեսականության ապահովման, դրանց պլանավորման և կատարման ընթացքի վերահսկման հարցերին:

2. ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի կողմից պատշաճ հսկողություն չի իրականացրել «Ոռոգում-ջրառ իրականացնող կազմակերպություններին ֆինանսական աջակցության տրամադրում» ծրագրով «Ջրառ» ՓԲԸ-ի հետ 22.01.2020թ. կնքված՝ «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով նախատեսված սուբսիդիայի տրամադրման» N 1-Ս պայմանագրով սահմանված մի շարք պահանջների կատարման նկատմամբ՝ հանգեցնելով կատարված աշխատանքների վերաբերյալ թերություններով կազմված հանձնման-ընդունման ակտերի ընդունմանը, «Ջրառ» ՓԲԸ-ի կողմից սուբսիդիայի գումարների ծախսման ուղղությունների վերաբերյալ սահմանված կարգով համապատասխան հաշվետվությունների չներկայացմանը:

3.Որոշ դեպքերում ջրօգտագործողների ընկերությունների հետ կնքվող սուբսիդիայի տրամադրման պայմանգրերը չեն նպաստում ֆինանսական հոսքերի արդյունվետ կառավարմանը և դրանց նպատակային օգտագործումը՝ արձանագրվել են նախորդ տարիների հարկային պարտավորությունների մասով պարտքի մարման նպատակով «Սյունիք» ՋՕԸ-ին 14,206.6 հազ. դրամի հատկացման, ինչպես նաև 2020թ. գարնան նախապատրաստական աշխատանքերի իրականացման նպատակով «Կոտայք» ՋՕԸ-ին նախատեսված 55,328.9 հազ. դրամի փոխարեն կատարված աշխատանքների դիմաց վճարվել է 62,914.8 հազ. դրամ:

4.ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի կողմից 1004 ծրագրի «31005 Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի շրջանակներում ջրային տնտեսության ենթակառուցվածքների հիմնանորոգում» և «31001 Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Վեդու ջրամբարի կառուցում» միջոցառումների մասով ֆինանսավորման գումարները գերազանցել

են փաստը (դրամարկղային ծախսը) համապատասխանաբար՝ 398,641.07 և 314,014.52 հազ. դրամով:

5. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից միջոցներ չեն ձեռնարկվել Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի մասհանման հայտերի հիման վրա կատարվող վճարումների գործընթացում դրանց ձևավորման և շրջանառության նկատմամբ ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի վերահսկողական գործառույթների սահմանազատման և գործող ընթացակարգերի վերանայման ուղղությամբ:

6. 2020 թվականի 1-ին կիսամյակում ջրօգտագործողների 15 ընկերությունների հետ կնքված սուբսիդիայի տրամադրման պայմանագրերով հատկացված գումարների ըստ ծախսային ուղղությունների օգտագործման վերաբերյալ տեղեկանքների համաձայն՝ ընկերությունների մոտ առաջացել է 115,295.3 հազ. դրամի չափով չծախսված գումարի մնացորդ:

7. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը

1. Քննարկել «Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի» և «Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Վեդու ջրամբարի կառուցում» ծրագրի կատարման ընթացքում ֆինանսավորման հետ կապված ընթացակարգերի վերանայման նպատակահարմարության հարցը՝ մասհանման հայտերի ձևավորման, դրանց ներկայացման և ընդունման, վճարման ենթակա գումարների ճշտության ապահովման գործում ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեին վերահսկողական գործառույթներ տրամադրելու նպատակով:

ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեին

1. Վերանայել մոտեցումները բյուջետային ծախսերի պլանավորման նկատմամբ՝ ներդնել ժամանակակից մեխանիզմներ ՀՀ պետական բյուջեով սահմանված ծրագրերի, ինչպես նաև դրանց շրջանակներում միջոցառումների և հոդվածների համար նախատեսված ծախսերի կատարման ընթացքը վերահսկելու ուղղությամբ:
2. Հետևել ՀՀ պետական բյուջեից սուբսիդիայի տրամադրման նպատակով կնքված պայմանագրերով սահմանված՝ պարտավորությունների կատարման ընթացքին, բացառել գումարների տրամադրման գործում ջրօգտագործողների ընկերությունների նկատմամբ տարբերակված մոտեցման դրսևորման երևութները:
3. Միջոցներ ձեռնարկել ջրօգտագործողների ընկերությունների հետ կնքվող սուբսիդիայի տրամադրման պայմանագրերով հատկացված գումարները նախորդ տարիներին գոյացած՝ կրեդիտորական, աշխատավարձերի վճարման, հարկերի, տույժերի և տուգանքների գծով կուտակված պարտավորությունների մարումը բացառելու, այդ գործում նրանց պատասխանատվությունը բարձրացնելու ուղղությամբ:
4. 1004 ծրագրի «31005 Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի շրջանակներում ջրային տնտեսության ենթակառուցվածքների հիմնանորոգում» և «31001 Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Վեդու ջրամբարի կառուցում» ծրագրերի իրականացման ընթացքում բացառել միջոցառումների մասով փաստի (դրամարկղային ծախս) համեմատ ֆինանսավորման գումարների գերազանցման երևույթները:
5. Ջրօգտագործողների 15 ընկերությունների հետ սուբսիդիայի տրամադրման կնքվող պայմանագրերում ապահովել հատկացվելիք գումարների ճշգրտությունը և դրա հաշվին վերացնել ընկերությունների մոտ առաջացող չծախսված գումարի մնացորդները:

6. Խստացնել պահանջը «Ոռոգում-ջրառ իրականացնող կազմակերպություններին ֆինանսական աջակցության տրամադրում» ծրագրով «Ջրառ» ՓԲԸ-ի հետ կնքված՝ «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով նախատեսված սուբսիդիայի տրամադրման» N 1-Ա պայմանագրի կատարման նկատմամբ:

Հաշվեքննության իրականացման ընթացքում հաշվեքննվող օբյեկտից ստացվել է բավարար տեղեկատվություն:
Հայտնաբերված խեղաթյուրումները էական և համատարած բնույթ չեն կրում:

Ծանոթացման և ստորագրման նպատակով հաշվեքննության արձանագրությունը ներկայացվել է հաշվեքննության օբյեկտի ղեկավարին, որի վերաբերյալ ներկայացվել է գրավոր բացատրություն (պարզաբանումներ), առարկություններ չեն ներկայացվել (կցվում է):